# SWYC Միավորների Հաշվարկի Հուշաթերթիկ

## *ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՇԱՁՈՂԵՐ*

1. Յուրաքանչյուր հարցաթերթիկ կազմված է 10 հարցից: Միավորներն անհրաժեշտ է հաշվել հետևյալ կերպ. «Դեռ ոչ» «0» միավոր, «Ինչ-որ չափով»՝ «1», և «Այո»՝ «2»: Չպատասխանված հարցերի համար տրվում է 0 միավոր

2. Գումարեք բոլոր 10 հարցերի միավորները ընդհանուր միավորը հաշվելու համար

3. Աջից տեսնում եք SWYC միավորների աղյուսակը: Տարիքին համապատասխան տողում տեսեք՝ արդյոք երեխայի գումարային միավորն ընկնում է «Վերանայման կարիք կա» կամ «Համապատասխանում է տարիքային սպասումների» շարքին Նշաձողերի հաշվարկը կարելի է անել նաև Excel-ով: Կարող եք մեր կայքում այցելել “Form Selector and Milestones Calculator” բաժինը: www.theSWYC.org.

## *ՆՇԱՁՈՂԵՐԻ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿ*

| ՁԵՎԱԹՈՒՂԹ | Տարիք (ամս.) | Վերանայման կարիք | Համապատասխանում է տարիքային սպասումներին |
|---|---|---|---|
| 2 ամս. | 1 - 3 | Նշաձողերի տարիքային միավորները հասանելի չեն | |
| 4 ամս. | 4 | **≤13** | ≥14 |
| | 5 | **≤15** | ≥16 |
| 6 ամս. | 6 | **≤11** | ≥12 |
| | 7 | **≤14** | ≥15 |
| | 8 | **≤16** | ≥17 |
| 9 ամս. | 9 | **≤11** | ≥12 |
| | 10 | **≤13** | ≥14 |
| | 11 | **≤14** | ≥15 |
| 12 ամս. | 12 | **≤12** | ≥13 |
| | 13 | **≤13** | ≥14 |
| | 14 | **≤14** | ≥15 |
| 15 ամս. | 15 | **≤10** | ≥11 |
| | 16 | **≤12** | >13 |
| | 17 | **≤13** | ≥14 |
| 18 ամս. | 18 | **≤8** | ≥9 |
| | 19 | **≤10** | ≥11 |
| | 20 | **≤11** | ≥12 |
| | 21 | **≤13** | ≥14 |
| | 22 | **≤14** | ≥15 |
| 24 ամս. | 23 | **≤10** | ≥11 |
| | 24 | **≤11** | ≥12 |
| | 25 | **≤12** | ≥13 |
| | 26 | **≤13** | ≥14 |
| | 27 | **≤14** | ≥15 |
| | 28 | **≤15** | ≥16 |
| 30 ամս. | 29 | **≤9** | ≥10 |
| | 30 | **≤10** | ≥11 |
| | 31 | **≤11** | ≥12 |
| | 32 | **≤12** | ≥13 |
| | 33 - 34 | **≤13** | ≥14 |
| 36 ամս. | 35 | **≤10** | ≥11 |
| | 36 | **≤11** | ≥12 |
| | 37 | **≤12** | ≥13 |
| | 38 - 39 | **≤13** | ≥14 |
| | 40 - 41 | **≤14** | ≥15 |
| | 42 - 43 | **≤15** | ≥16 |
| | 44 - 46 | **≤16** | ≥17 |
| 48 ամս. | 47 | **≤12** | ≥13 |
| | 48 - 50 | **≤13** | ≥14 |
| | 51 - 53 | **≤14** | ≥15 |
| | 54 - 57 | **≤15** | ≥16 |
| | 58 | **≤16** | ≥17 |
| 60 ամս. | 59 - 65 | Նշաձողերի տարիքային միավորները հասանելի չեն | |

## *ՆՈՐԱԾՆԻ ՄԱՆԿԱԲՈՒԺԱԿԱՆ ԱԽՏԱՆԻՇՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ (ՄՄԱՍ)*

1. ՄՄԱՍ -ը բաժանված է երեք մասի, յուրաքանչյուրում՝ 4 հարց: Բաժինների միավորների հաշվարկն անելիս պետք է տալ «0» յուրաքանչյուր «Ոչ, երբեք» -ի, «1» յուրաքանչյուր «Ինչ-որ չափով» -ի, և «2» յուրաքանչյուր «Շատ» -ի համար, ապա գումարել ստացված արդյունքները

    a. Այն դեպքում, երբ ծնողները մեկ հարցին տվել են մի քանի պատասխան և տվյալ պահին անհասանելի են ճշտում կատարելու համար, անհրաժեշտ է ընտրել առավել անհանգստացնող պատասխանը (այսինքն՝ «Ինչ-որ չափով» կամ «Շատ»)

    b. Այն դեպքում, երբ պատասխանը բացակայում է, հաշվեք 0

2. **Եթե գումարը 3 կամ ավելի է բաժիններից որևէ մեկում, դա վկայում է, որ երեխան «ռիսկի խմբում» է և հետագա հետազոտության կարիք կա**

## *ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՆԿԱԲՈՒԺԱԿԱՆ ԱԽՏԱՆԻՇՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ (ՆՄԱՍ)*

1. ՆՄԱՍ-ի հաշվարկն անելիս պետք է տալ «0» յուրաքանչյուր «Ոչ, երբեք» -ի, «1» յուրաքանչյուր «Ինչ-որ չափով» -ի, եւ «2» յուրաքանչյուր «Շատ» -ի համար, ապա գումարել ստացված արդյունքները

    a. Այն դեպքում, երբ ծնողները մեկ հարցին տվել են մի քանի պատասխան և տվյալ պահին անհասանելի են ճշտում կատարելու համար, անհրաժեշտ է ընտրել առավել աննհանգստացնող պատասխանը (այսինքն՝ «Ինչ-որ չափով» կամ «Շատ»)

b. Այն դեպքում, երբ պատասխանը բացակայում է, հաշվեք 0

2. **Եթե ՆՄԱՍ-ի գումարային միավորը 9 կամ ավելի է, դա վկայում է, որ երեխան «ռիսկի խմբում» է և հետագա հետազոտության կարիք կա**

## *ԾՆՈՂԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ԾԴՍՓՄ)*

1. Գնահատեք 7 հարցերից յուրաքանչյուրը: Յուրաքանչյուր հարցի համար տրվում է կա՛մ «1», կա՛մ «0»: Եթե ծնողն ընտրել է մեկ կամ մի քանի պատասխան, որոնք գտնվում են վերջին երեք սյուներում, հարցին տրվում է «1» միավոր, հակառակ դեպքում տրվում է «0» միավոր

2. Այն դեպքում, երբ մեկ հարցին ծնողը տվել է մի քանի պատասխան (այսինքն, մեկ տողում մի քանի պատասխան)
   a. Ընտրեք առավել մտահոգիչ պատասխան (օրինակ՝ ավելի ցածր գործառնական /ֆունկցիոնալ վարք), որը գտնվում է աջ կողմում

   a. Եթե ծնողը նույն հարցի համար ընտրել է մի քանի պատասխան վերջին երեք սյուներում, այդ հարցին պետք է տալ «1» միավոր: Քանի որ ԾԴՍՓ-ի հարցերը ընդամենը յոթն են, առավելագույնը կարող է լինել «7» միավոր

   b. Եթե պատասխանը բացակայում է, հաշվեք 0

3. **Վերջին երեք սյուներում «3» կամ ավելի միավորները վկայում են, որ երեխան «ռիսկի խմբում» է և հետագա հետազոտության կարիք կա**

## *ՀԱՐՑԵՐ ԸՆՏԱՆԻՔԻ ՄԱՍԻՆ*

Այս ցանկի կետերին դրական պատասխանը ցուցում է, որ երեխան պետք է հետագա հսկողության ենթարկվի

1. Հարց 1. Վերաբերում է ծխախոտի օգտագործմանը

2. Հարցեր 2, 3 և 4. Առնվազն մեկ դրական պատասխան ցուցադրում է, որ կարող է ունենալ հոգեմետ նյութերի օգտագործման խանգարում

3. Հարց 5՝ ստուգում է սննդի անապահովությունը

4. Հարցեր 6 և 7. Ծնողական դեպրեսիան գնահատվում է Ծնողների առողջության հարցաշարի-2 (ԾԱՀ-2) միջոցով. Պատասխանները հաշվարկվում են այսպես. «Երբեք»՝«0» միավոր, «Մի քանի օր»՝ «1», «Օրերի կեսից ավելին»՝ «2», և «Գրեթե ամեն օր»՝ «3»: **Գումարային 3 կամ ավելի միավորը ցուցում է հետագա քննության**

5. Հարցեր 8 և 9. Տնային բռնության մասին են: Արդյունքը համարվում է դրական, եթե պատասխանի տարբերակներից վատագույնն ընտրված է մեկ կամ երկու հարցերում

6. Ծնողական մտահոգություններ: Եթե Ծնողական մտահոգությունների մասին երկու հարցերից որևէ մեկին ծնողը պատասխանում է «Ինչ-որ չափով» կամ «Շատ», այսինքն՝ իր երեխայի հետ կապված մտահոգություն ունի, մանկաբույժը պետք է դա օգտագործի որպես առիթ հետագա քննարկում ծավալելու համար

Floating Hospital for Children at Tufts Medical Center

*copyright © Tufts Medical Center, 2010. All rights reserved.*